ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2016 թ. հոկտեմբերի 4-ին, N 116 - Ա

ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2002 թվականի հուլիսի 25-ի N 7 որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 9-րդ կետը՝ ***որոշում եմ.***

Հաստատել՝ 2016 թվականի հոկտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առաջատար պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող ատեստավորման հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

Գ. ԳՅՈՌԱԼՅԱՆ

Հավելված

ՀՀ Արագածոտնի մարզպետի

2016թ. հոկտեմբերի 4-ի N 116-Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի առաջատար պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների 2016 թվականի հոկտեմբերի 5-ին ատեստավորում անցկացնող ատեստավորման հանձնաժողովի

1. Կարեն Բարսեղյան - Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի իրավական ապահովման և վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ /հանձնաժողովի նախագահ /

2. Իշխան Բարսեղյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ /հանձնաժողովի քարտուղար/

3. Արմեն Ավետիսյան - Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի տնտեսական բաժնի պետ

4. Սիրամարգ Ղուկասյան - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի խորհրդական

5. Անժելա Իսպիրյան - Աշտարակի թիվ 1 հիմնական դպրոցի ուսուցչուհի

6. Ռուզաննա Վարդանյան - Աշտարակի Պ.Պռոշյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի ուսուցչուհի

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ